**Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր**
**ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ հիվանդանոցային մասնաշենքի վերանորոգման շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության իրականացման**
**Թիվ CR4/CQS/B-C/040-16 մրցույթի**

14 Ապրիլ, 2016թ.

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է վարկ «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման» ծրագրի ծախսերի համար և նախատեսում է այդ միջոցների մի մասն ուղղել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ հիվանդանոցային մասնաշենքի վերանորոգման շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության պայմանագրի շրջանակներում թույլատրելի վճարումներ կատարելու համար:

Խորհրդատվական ծառայությունների համառոտ նկարագիրը.

1. Շինարարության տեխնիկական հսկողությունը իրականացվում է շինհրապարակի ամենօրյա այցելությամբ, առանձին դեպքերում տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությամբ, որոնք հաստատվում են տեխնիկական հսկողության մատյանում գրառումների կատարման միջոցով և ամսական հաշվետվություններով, ինչի հիման վրա պատվիրատուն պետք է կատարի վճարումներ:
2. Տեխնիկական հսկողությունն իրականացվում է հսկողական և ընթացիկ ստուգումներով, բացումներով, լուսանկարումներով, ինժեներական տարբեր համակարգերի փորձարկումներին մասնակցելով, բոլոր շինարարական ծավալների մանրամասն չափագրումներով, որոնց ընթացքում պարզվում է կատարված աշխատանքների համապատասխանությունը նախագծային լուծումներին, պայմանագրային ծավալներին, շինարարական նորմերին և կանոններին:
3. Տեխնիկական հսկողությունը ապահովում է կատարված աշխատանքների, օգտագործվող նյութերի, կոնստրուկցիաների, իրերի որակը, ինչպես նաև աշխատանքների կատարման տեխնոլոգիական պահանջներն ըստ նախագծանածահաշվային փաթեթի, գործող նորմերի և պետական ստանդարտների, ինչպես նաև Պատվիրատուի կողմից հաստատված շինանյութերի նմուշների:

Պայմանագրերի ստորագրման նախատեսվող ժամկետն է մայիս-հունիս 2016թ.: Աշխատանքների կատարման ժամկետներն են. քսանյոթ (27) ամիս պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո կամ շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում:

Սույնով «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հրավիրում է բոլոր իրավասու խորհրդատուներին՝ կազմակերպություններին համապատասխան փորձով, արտահայտել իրենց հետաքրքրությունը վերոնշյալ

ծառայությունների մատուցման վերաբերյալ: Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկություն իրենց որակավորման վերաբերյալ նշված ծառայությունները մատուցելու համար (կազմակերպության մասին տվյալներ, փորձառություն նմանատիպ ծառայությունների մատուցման մեջ, նմանատիպ ծառայությունների նկարագրություն, ծառայությունների մատուցման հնարավորություն և այլն):

***Կարճ ցուցակի կազմման չափանիշներն են՝***

- ***Կազմակերպության ընդհանուր փորձառությունը շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ոլորտում վերջին 7 տարիների ընթացքում***
- ***Վերջին 3 տարիների ընթացքում առավելագույնը երկու նմանատիպ պայմանագրի առկայություն, որոնց շրջանակներում կազմակերպությունը իրականացրել է (բարեհաջող ավարտված) հանրագումարային ծավալով առնվազն 6000քկմ մակերեսով հասարակության նշանակության շենքերի վերանորոգման, վերակառուցման կամ կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն:***

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել Համաշխարհային Բանկի 2011 թ.-ի հունվարի 11-ի, Ուղեցույց՝ «ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» պարբերություն 1.9-ին (Խորհրդատուների ուղեցույց), որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությունների տեսքով կամ որպես ենթախորհրդատուներ՝ իրենց որակավորումը բարելավելու համար:

Խորհրդատուն ընտրվելու է Համաշխարհային բանկի կողմից 2011թ. Հունվարին հրապարակված, 2014թ հուլիսին վերանայված «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների միջոցներով խորհրդատուների ընտրության և ներգրավում» ուղեցույցով սահմանված ***«Ընտրություն ըստ խորհրդատուի որակավորման» (CQS) մեթոդի համաձայն:***

Հետաքրքրված խորհրդատուները կարող են հավելյալ տեղեկություններ ստանալ աշխատանքային օրերին, 09:30-ից մինչև 17:30 ընկած ժամանակահատվծում, դիմեն ՝
Ում: Աննա Հարությունյանին՝ ՀՀ ԱՆ «ԱԾԻԳ» ՊՀ, գնումների մասնագետ
Հեռ. (+374 10) 297537, 297538; էլ-փոստ. procurement@healthpiu.am

Հետաքրքրությունների ներկայացման հայտերը պետք է ներկայացվեն Հայերեն լեզվով,

էլեկտրոնային (Adobe PDF format) կամ թղթային տարբերակով ուղարկելով ստորև նշված հասցեով: Վերջնաժամկետ է սահմանվում ***28 ապրիլ 2016թ. և պետք է լինի հստակ նշված # CR4/CQS/B-C/040-16 "Հետաքրքրության հայտ-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ հիվանդանոցային մասնաշենքի վերանորոգման շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության իրականացման".***

ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
Ում: Պրն. Նելսոն Զուլոյանին, տնօրենի պաշտոնակատար
49/4, Կոմիտասի պող., Երևան 0051, ՀՀ
Հեռ. (+374 10) 297537, 297538
էլ-փոստ. **info@healthpiu.am**
**www.healthpiu.am**